ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
«ԱԲՈՎՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ»
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ

ՀՀ Կոտայքի մարզ, ք.Աբովյան, Բարեկամության հր.-1, 2201, հեռ. (0222) 3-54-34

Ե-40 15.09.2023թ.

Կոտայքի մարզ, Աբովյան համայնք
Գ. Մայակովսկի, 10 փ. 14 տուն
ԱՁ ԱՆՆԱ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ

Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ

ԱԲՀԿՏ-ԳՀԾՁԲ 23/03 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՊԱՅՄԱՆԱԳԻՐՆ ԱՄԲՈՂՋՈՒԹՅԱՄԲ ՄԻԱԿՈՂՄԱՆԻ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Աբովյանի համայնքային կոմունալ տնտեսություն ՀՈԱԿ-ի և ԱՁ Աննա Խաչատրյանի միջև 2023 թվականի հունվարի 5-ին կնքվել է ԱԲՀԿՏ-ԳՀԾՁԲ -23/03 ծածկագրով պայմանագիրը, որի 1.1 կետի համաձայն՝ <<Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Աբովյան համայնքի Մայակովսկի,Պտղնի բնակավայրերի աղբի փոխադրման ծառայություններ մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների >>:

Վերոնշյալ պայմանագրի 2-րդ մասի 2.1.3 կետի համաձայն պատվիրատուն իրավունք ունի.

<<Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը >>:

Հայտնում ենք, որ Աբովյանի համայնքային կոմունալ տնտեսություն ՀՈԱԿ-ի Բնակավայրերի կառավարման ղեկավար Լ. Մկրտումյանի և մեքենամեխանիզմների

հավաքակայանի գլխավոր մասնագետ՝ Ա. Մանուկյանի կողմից Պայմանագրով պատվիրատուին վերապահված իրավունքների և պարտավորությունների իրացման արդյունքում իրականացված ուսումնասիրությունից պարզվեց, որ Դուք չեք պահպանել պայմանագրի անբաժանելի մասը կազմող հավելված 1-ով Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանված ծառայության մատուցման որակը և ժամկետը: Մասնավորապես սույն թվականի օգոստոս ամսին Ձեր կողմից իրականացված աղբի տեղափոխությունից հետո բնակավայրերի որոշ աղբարկղերում և աղբարկղերի շուրջ առկա են եղել աղբի կուտակումներ: 2023թ. օգոստոսի 10-ից Պտղնի և Մայակովսկի համայնքներում Ձեր կողմից ընդհանրապես դադարեցվել է աղբահանությունը:

2023 թվականի օգոստոսի 18-ին Ե-37 Ծանուցմամբ Ձեզ տեղեկացրել ենք պայմանագրային պարտավորությունները չկատարելու մասին՝ ակնկալելով Ձեր կողմից հետագա գործողություններ պայմանագիրը լիակատար իրականացնելու ուղղությամբ, սակայն անարդյունք:

2023 թվականի սեպտեմբերի 4-ին Ե-39 Ծանուցմամբ Ձեզ զգուշացրել ենք պայմանագրային պարտավորությունները չկատարելու արդյունքում պայմանագրի միակողմանի լուծման մասին և տրվել է եռօրյա ժամկետ պայմանագիրը չկատարելու վերաբերյալ Ձեր պատճառաբանությունները և բացատրությունը ներկայացնելու համար: Դուք չեք արձագանքել:

ՀՀՔաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

<<Պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն, այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը>>:

ՀՀՔաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝

<< Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը>>:

ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերության համաձայն՝

<< Էական է ճանաչվում կողմերից մեկի թույլ տված պայմանագրի խախտումը, որը հանգեցնում է մյուս կողմի համար այնպիսի վնասի, որը զգալիորեն զրկում է վերջինիս այն բանից, ինչը նա իրավունք ուներ ակնկալել պայմանագիրը կնքելիս>>:

ՀՀՔաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3 - րդ մասի համաձայն՝

<<Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված>>:

ՀՀՔաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 5 - րդ մասի համաձայն՝

<<Եթե պայմանագրի փոփոխման կամ լուծման համար հիմք է ծառայել կողմերից մեկի թույլ տված պայմանագրի էական խախտումը, մյուս կողմն իրավունք ունի պահանջել հատուցելու պայմանագրի փոփոխմամբ կամ լուծմամբ պատճառված վնասները>>:

ՀՀՔաղաքացիական օրենսգրքի 780-րդ հոդվածի 2 - րդ մասի համաձայն՝

<<Կատարողն իրավունք ունի հրաժարվել ծառայությունների վճարովի մատուցման պայմանագիրը կատարելուց՝ պատվիրատուի վնասները լրիվ հատուցելու պայմանով>>:

Կնքված պայմանագրով Աբովյան համայնքի Մայակովսկի, Պտղնի բնակավայրերի աղբի փոխադրման ծառայությունների մատուցման պարտավորությունը Կատարողը իրականացրել է ոչ լրիվ ծավալով, հետևաբար Աբովյանի կոմունալ տնտեսություն ՀՈԱԿ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Էդգար Սարդարյանը ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով միակողմանի հրաժարվում է ԱՁ Աննա Խաչատրյանի հետ կնքված ԱԲՀԿՏ-ԳՀՇՁԲ-23/03 ծածկագրով գնման պայմանագրից, համապատասխանաբար համարելով այն լուծված և պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառել ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի 526-Ն որոշման 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Ընկերության կողմից, որպես պայմանագրային պարտավորությունների պատշաճ կատարման ապահովում ներկայացրած որակավորման և պայմանագրի ապահովումները իրենց վճարման պահանջագրերի հետ միասին, սահմանված կարգով, կներկայացվեն ԱՁ-ին սպասարկող բանկ, տուժանքի մասին համաձայնագրերով սահմանված գումարներից համապատասխանաբար 467743 դրամ և 701 615 դրամ Աբովյանի համայնքային կոմունալ տնտեսություն ՀՈԱԿ-ի ՎՏԲ-Հայաստան բանկ, Աբովյան մ/ճ 16024043506700 հաշվեհամարին փոխանցելու նպատակով:

Գնումների մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ընկերության տվյալները օրենքով սահմանված կարգով կներկայացվեն լիազոր պետական մարմին:

Ընդունել ի գիտություն,

Եթե գնումների մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածով նախատեսված լիազոր մարմին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ պայմանագիրը կնքած անձը վճարում է պայմանագրի և որակավորման ապահովման գումարը ապա պատվիրատուն տվյալ մասնակցին ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնում լիազորված մարմին և եթե պայմանագիր կնքած անձի կողմից պայմանագրի և որակավորման ապահովման գումարի վճարումն իրականացվում է լիազորված մարմնին

որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալուց հետո, բայց ոչ ուշ, քան պայմանագիրը կնքած անձին ցուցակում ներառելու վերջնաժամկետը լրանալու օրը, ապա պատվիրատուն դրա մասին գրավոր տեղեկացնում է լիազորված մարմնին, որի հիման վրա մասնակիցը չի ներառվում ցուցակում:

Ընդ որում սույն կետում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը հրապարակվելու օրվա հաջորդող 10-րդ օրը, Որոշումը կայացվելու հաջորդ օրը այն գրավոր տրամադրվում է լիազոր մարմնին և կատարողին: Լիազորված մարմինը Կատարողին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վեաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում տվյալ դատական գործի եզրափակիչ ակտն ուժի մեջ մտնելուն հաջորդող հինգերորդ օրը, եթե դատական քննության արդյունքով որոշման կատարման հնարավորությունը չի վերացել:

ՏՆՕՐԵՆԻՔ՝Պ՝ _____ Է.ՍԱՐԴԱՐՅԱՆ